«Արդարադատության ոլորտի բյուջեի վերլուծության հիման վրա շահերի պաշտպանություն և հանրային քննարկում» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակում:

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության ամփոփում.
Կատարված է՝ հիմք ընդունելով «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության արդարադատության ոլորտի 2024 թվականի պետական բյուջեի (հաշվետվական տվյալներով) վերլուծությունը և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2023–2026 թթ. գործողությունների ծրագրի հակակոռուպցիոն կրթության ուղղության մոնիթորինգի արդյունքները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ–ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ–ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ–ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	**3**
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ	**4**
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	**5**
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**7**
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**23**
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	**24**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆ-Արդարադատության նախարարություն

ԲԴԽ – Բարձրագույն դատական խորհուրդ

ԲՈՒՀ – Բարձրագույն ուսումնական հաստատություն

ԳԾԾ-Գործողությունների ծրագիր

ԿԿՀ – Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԿԳՄՄՆ – Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԿ-Հասարակական կազմակերպություն

ՔՀԿ-Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

HELP – European Programme for Human Rights Education for Legal Professionals

ԿՀՑ -Կատարողականի հիմնական ցուցիչները (Key Performance Indicators, KPI)

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն,

ՀՉ- Հավատարմագրման չափորոշիչներ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Շարունակական **հակակոռուպցիոն կրթության** ներդնումը մանկապարտեզ-դպրոց-ԲՈՒՀ-կրթական շղթայով, հանդիսանում է կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունք սերմանելու ՀՀ **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ քաղաքականության հիմնական միջոցը**: Հանրակրթական և բարձրագույն կրթական համակարգերում ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ քաղաքականության ներդրումը հնարավոր է առարկայական ծրագրերի, ուսուցիչների, դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների, ՔՀԿ-ների, ԶԼՄ ներկայացուցիչների, հանրային ծառայողների վերապատրաստումների, կոռուպցիայի կանխարգելմանն ու բարեվարքությանն առնչվող տեսահոլովակների պատրաստման և այլ եղանակներով Հայաստանի կրթական և արդարադատության համակարգերում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը ոչ միայն կրթական բաղադրիչ է, այլ ժողովրդավարության, պետական կառավարման և օրենքի գերակայության ամրապնդման անհրաժեշտություն:

Բարձրագույն կրթության, ԿԿՀ-ի և արդարադատության մարմինների համագործակցությունը պետք է լինի ստրատեգիական, երկարաժամկետ և տվյալահեն: Այս փաստաթղթում ներկայացված առաջարկները ձևավորում են մեկ միասնական համակարգ, որտեղ.

- կրթությունը → ձևավորում է արժեքներ,
- բյուջեն → ապահովում է կայունություն,
- մոտեցումները → դառնում են չափելի,
- պետական մարմինները → գործում են համակարգավորված մեխանիզմով:

Առաջարկվում է փաստաթուղթն ընդունել որպես քաղաքականության մշակում և վերանայում իրականացնող մարմինների կողմից կիրառման համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար ուղղություններից մեկը հակակոռուպցիոն կրթության միջոցով կոռուպցիոն կանխարգելումն է՝ սկսած նախադպրոցական համակարգից մինչև բուհական և մասնագիտական մակարդակ։

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության (2023–2026) ռազմավարական նպատակ 3-ը՝ «Հանրային իրազեկվածության, կրթության և հակակոռուպցիոն մշակույթի ամրապնդում» անվանմամբ, պետական քաղաքականության առանցքային բաղադրիչն է։ Այն, ի թիվս այլնի, ընդգրկում է՝

- հակակոռուպցիոն կրթության ներդրում դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ)-երում,
- հանրային իրազեկման և հաղորդակցման կայուն արշավներ,
- թվային կրթական միջավայրի զարգացում,
- բարեվարքության և ուսումնական միջավայրի բարելավում։

Քաղաքականության արդյունավետ իրականացումը, այնուամենայնիվ, պայմանավորված է ոչ միայն առանձին ծրագրերով, այլ նաև պետական բյուջեի բաշխման թափանցիկությամբ, ծրագրերի արդյունավետ պլանավորմամբ, կատարողականի հստակ չափումներով և միջոլորտային համագործակցությամբ։

Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համակարգային վերլուծություն՝ կենտրոնանալով ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) առկա խնդիրների վերհանման, առաջարկությունների և փոխկապակցված լուծումների ներկայացման վրա։

Վերլուծության հիմքում ընկած են «**Արդարադատության ոլորտի բյուջեի վերլուծության հիման վրա շահերի պաշտպանություն և հանրային քննարկում**» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում կատարված հետևյալ գործողությունները և դրանց հավաքական արդյունքները.

- «Նոր էտապ» երիտասարդական հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում հակակոռուպցիոն կրթության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի կատարման ընթացքի

և արդյունավետության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները,

- ՀՀ պետական իրավասու մարմինների, Հայաստանի պետական և մասնավոր ԲՈՒՀ-երից ստացված հարցման պատասխանները,
- ՀՀ պետական իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ իրականացրած հանդիպումների և քննարկումների արդյունքները[1],
- Քաղաքացիական հասարակության շահագրգիռ հատվածի ներկայացուցիչների տրամադրած համապատասխան տեղեկատվությունը, վերջիններիս հետ իրականացրած հանդիպումների և քննարկումների արդյունքները[2],
- «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացրած «Արդարադատության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացում» ծրագրի շրջանակներում արդարադատության ոլորտի բյուջեի վերլուծությունը[3],
- ՀԿ-ների, ԲՈՒՀ-երի, պետական մարմինների հետ առցանց հանդիպումները,
- Առանձին հետազոտությունների միջոցով կատարված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները՝ ներառյալ բուհական հակակոռուպցիոն կրթական ծրագրերը, որը թույլ է տալիս պնդել, որ պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական տարբեր հաստատությունների կողմից հակակոռուպցիոն կրթության մեթոդաբանության նկատմամբ առկա է ոչ միատեսակ վերաբերմունք: Սրա գլխավոր խնդիրն այն է, որ պետության կողմից հակակոռուպցիոն կրթության կազմակերպման և մեթոդաբանության համակարգված քաղաքականություն չի վարվում:

[1] Հանդիպման մանրամասները հասանելի են հետևյալ հղմամբ. https://budgets.am/6046.html
[2] Հանդիպման մանրամասները հասանելի են հետևյալ հղմամբ. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0CGRuaaUrC9WwcWAkofZeLVyXWAWgH9h6ucadY8KVTFXRaJ8W87PTELZ611wGJz38l&id=61576807709711&locale=hy_AM
[3] Արդարադատության ոլորտի բյուջեի վերլուծությունը հասանելի է հետևյալ հղմամբ. https://budgets.am/4136.html

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի լույսի ներքո 2024 թվականի ընթացքում արդարադատության ոլորտում իրականացվել են հակակոռուպցիոն կրթության, իրազեկման, հաղորդակցման և կարողությունների զարգացման հետևյալ ծրագրերը.

- «Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում»-(ԲԳԿ 1123)՝ ոլորտային ծրագրային կառույցում դա առաջնային «հաղորդակցական» բլոկն է: 2024-ին դրա ծախսերը կազմել են մոտ 1.235 մլրդ դրամ
- «Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացում» ենթամիջոցառման իրականացման համար, ԿԿՀ-ին հատկացվել է 12.1 մլն դրամ, որը, սակայն, կատարվել է միայն 45% մակարդակով: Սա միակ հստակ «կրթություն+հանրային հաղորդակցություն» ուղղված միջոցառումն է, որը նշված է կատարողականով[4]:
- «Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիթորինգի իրականացում» (ԲԳԿ 1057) ծրագրի իրականացման համար ԱՆ հատկացվել է 2.289 մլրդ դրամ, որի շրջանակում են նաև հակակոռուպցիոն քաղաքականության հաղորդակցական բաղադրիչի պլանավորումը/վերահսկումը:
- Պետծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման բլոկ (ԲԳԿ 1149)՝ 468.5 մլն դրամ, որն ուղղակիորեն չի փոխարինում հակակոռուպցիոն հանրային կրթությանը, բայց ներառում է ներդաշնակելի հակակոռուպցիոն ուսուցողական մոդուլներ պետական համակարգի համար:

---

[4] «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության արդարադատության ոլորտի 2024 թվականի պետական բյուջեի (հաշվետվական տվյալներով) վերլուծություն, էջ 16: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2023–2026 թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի արդյունքները https://moj.am/storage/uploads/AC_Monitoring_Report_2025_1st_half%20(1).pdf

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության (2023–2026 թթ.) Ռազմավարական նպատակ 3-ի կատարման կատարողականը և բացերը (մոնիթորինգի հիման վրա)։

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի (ԳԾԾ) ռազմավարական նպատակ 3-ը ձևակերպված է հետևյալ կերպ. «Հանրային իրազեկվածության, կրթության և հակակոռուպցիոն մշակույթի ամրապնդում»։ Այն ընդգրկում է.

- Հակակոռուպցիոն թեմատիկ կրթության ներդրում դպրոցներում և բուհերում,
- Հանրային իրազեկման արշավների իրականացում,
- Թվային և մեդիա հաղորդակցական միջոցների ակտիվացում։

Հակակոռուպցիոն կրթության քաղաքականության բուհական հատվածի վրա կենտրոնացումը թույլ է տալիս արձանագրել ՀՀ բուհական միջավայրում առկա հետևյալ մարտահրավերները.

Խնդիր 1. Չնայած յուրաքանչյուր տարվա բյուջեում հակակոռուպցիոն կրթությանը հատկացված միջոցների՝ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կրթություն–իրազեկում ենթամիջոցառման կատարողականի ցածր (45%)** աստիճանը հուշում է, որ կրթության և իրազեկման ոլորտում հակակոռուպցիոն մշակույթի ներդրումը առերեսվում է մի շարք խնդիրների։ Խնդիրների պատճառները խորությամբ հասկանալու համար ՀՀ պետական և մասնավոր ԲՈՒՀ-երին ուղարկվել են հարցումներ, որի նպատակն էր պարզել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023–2026 թվականների գործողությունների ծրագրի **3.8 գործողության** իրականացման ընթացքը, բովանդակությունը, ինչպես նաև ծրագրի տարածվածությունն ու ազդեցությունը ուսանողների և դասախոսական անձնակազմի շրջանում, հակակոռուպցիոն դասընթացի բովանդակությունն ու ձևաչափը (թեմատիկ ուղղություններ, մեթոդաբանություն, ուսումնառության միջոցներ), ուսանողների կողմից հետադարձ կապի ապահովման գնահատականը և ծրագրի արդյունավետության աստիճանը։ Հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի կատարման ընթացքի և արդյունավետության վերաբերյալ բուհերից ստացված համապատասխան տեղեկատվության համաձայն՝ բակալավրիատի և մագիստրատուրայի գրեթե բոլոր մասնագիտական կրթական

ծրագրերի ուսումնական պլաններում մշակված և ներդված են հակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամընտրական կամ պարտադիր) դասընթացների ինքնավար մոդել, որոնք պարունակում են բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն բաղադրիչներ:

Միաժամանակ պետք է նշել, որ տիպային դասընթացի մոդելն ուղղված է հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի կանխարգելման, պայքարի միջոցների, հանրությանը պայքարի գործիքակազմում ընդգրկելու, այդ համատեքստում՝ ինստիտուցիոնալ առկա և նոր լուծումների, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կառույցների և ներպետական իրավական ակտերի իրավադրույթների բովանդակության բացահայտմանը, դրանց վերլուծությանը: Վերջինիս նպատակն է ներկայացնել կոռուպցիա հասկացությունը, դրա հակահիրավական նշանակությունը և դրսևորման ձևերը, ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը և դրա առանձնահատկությունները, տեսական վերլուծության ենթարկել Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային, ներպետական իրավական կառուցակարգերը, ներկայացնել 2023-2026թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները, վերհանել ՀՀ-ում առավել տարածված կոռուպցիոն խնդիրներն ըստ ոլորտի կարգավորման ու կոռուպցիոն վարքի ինստիտուցիոնալ և նորմատիվ առանձնահատկությունները: Իրականացված հարցումների պատասխանները ցույց են տվել որ թեև ԲՈՒՀ-երն առավելապես ամենայն պատրաստակամությամբ են տրամադրված հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի հանդեպ, իսկ “Հակակոռուպցիոն քաղաքականություն» դասընթացով իրականացվող թեմատիկ ուղղություններն ու որդեգրված մեթոդաբանությունը բավարար է ծրագրի առջև դրված խնդիրների լուծման համար[5],

[5] “Հակակոռուպցիոն քաղաքականություն» դասընթացն իրականացվում է հետևյալ թեմատիկ ուղղություններով. 1. կոռուպցիայի հասկացությունը, 2. կոռուպցիան որպես սոցիալական երևույթ կոռուպցիան որպես իշխանության կոռոզիա 4. հակակոռուպցիոն քաղաքականության հասկացությունը և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձը քաղաքականությունը և դրա առանձնահատկությունները, 6, կոռուպցիայի դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն միջազգային իրավական կառուցակարգերը, 2023-2026 թվականների ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և կոռուցացիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները, 8 Կոռուպցիայի կանխարգելման մարմինների համակարգը Հայաստանի Հանրապետությունում, 9. կառավարման և կոռուպցիայի դեմ վարքագծի կանոնները՝ որպես

այնուամենայնիվ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների օրենքով սահմանված շրջանակներում ինքնակառավարման իրավունք ունենալու մասին դրույթը, և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի[6] 4-րդ հոդված 1-ին մասի 6-րդ կետի՝ բարձրագույն ուսումնական հաստատության ակադեմիական ազատության սկզբունքը թույլ են տալիս ԲՈՒՀ-երին ինքնուրույն մշակել ու հաստատել բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, ուստի բուհական ծրագրերի արդիականացման, պարտադիր կանոնավոր կրթական դասընթացների անցկացման վերաբերյալ հարցերը գտնվում են բարձրագույն ուսումնական հաստատության ակադեմիական ազատությունների և իրավասությունների շրջանակում:

Հետևաբար, այս առնչությամբ համապատասխան մոդուլների գործարկման արդյունավետության ապահովման առկա մեխանիզմները անհրաժեշտ բայց ոչ բավարար են, իսկ վերահսկողության ու մշտադիտարման բացակայությունն ուղեկցվում են կրթություն–իրազեկում ենթամիջոցառման կատարողականի ցածր աստիճանով:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մոնիթորինգի (2025 թ. առաջին կիսամյակ) արդյունքներով արձանագրվել է.

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) գործարկել է առցանց ուսուցման հարթակ (elearning.cpcarmenia.am) և «HELP» դասընթացներ՝ նախատեսված պետական ծառայողների և հարակից մասնագիտական խմբերի համար: Սա նպաստում է հակակոռուպցիոն գիտելիքների մասշտաբային փոխանցմանը:

լավ իրավաքաղաքացիական գիտակցության ձևավորումը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք10 սվորողների պայքարի արդյունավետ միջոց, 1 կոռուպցիա և գենդեր, 12 կոռուպցիան և աղքատությունը, 13. կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցները: Թեմաները դասավանդվում հետևյալ հիմնական մեթոդներով՝ փոխներգործուն մեթոդ, զրույց, բացատրություն, քննարկում, մտագրոհ: Իսկ ուսանողների հետ կապը և ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացվում են հետևյալ եղանակներով սեմինարներ, անանուն հարցումների միջոցով ուսանողների կարծիքի վերհանում: :

[6] https://www.arlis.am/hy/acts/214346

- 2025 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (ՄԻՊ) կազմակերպել է հանրային իրազեկման լայնածավալ արշավներ՝ մեդիա և սոցիալական ցանցերի միջոցով [7], որի շրջանակում նախատեսվել են այցելություններ ուսումնական հաստատություններ՝ երեխաների և երիտասարդների իրազեկման համար:

Ըստ ՄԻՊ գրասենյակի պաշտոնական հաղորդագրության՝ 2025 թվականին ՄԻՊ գրասենյակը նախանշել է կրթական հաստատություններում այցեր և իրազեկման արշավներ՝ ուսանողների/դպրոցականների շրջանում իրավագիտակցության բարձրացման համար: Այս արշավները, ըստ զեկույցների, հիմնականում կենտրոնանում են երեխաների իրավունքների և իրավագիտակցության բարձրացման հարցերի վրա՝ ներառելով ՝ մարդու իրավունքների, բռնության, անհանդուրժողականության և այլ հասարակական կարևոր հարցերի վերաբերյալ թեմատիկ ծավալներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսանողների և աշակերտների իրազեկվածությունն ու քաղաքացիական գիտակցությունը՝ անուղղակիորեն շոշափելով նաև հակակոռուպցիոն մշակույթն ու բարեվարքության հարցերը՝ առանց կենտրոնանալու հենց կոռուպցիոն ռիսկերի, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության վրա, ինչը նվազեցնում է երիտասարդների ներգրավվածությունը հակակոռուպցիոն մշակույթի ձևավորման գործընթացներում: Այնուամենայնիվ այդ արշավները առայժմ մասամբ են ընդգրկում հակակոռուպցիոն բաղադրիչը, ինչը հաստատվում է բյուջետային մոնիթորինգի տվյալներով: Սա ցույց է տալիս, որ հավատարմագրված պետական միջոցառումների հանրային ազդեցությունը **ոչ բավարար է**, հատկապես այն երիտասարդների համար, որոնք արդեն գտնվում են ԲՈՒՀ-երի հաղորդակցական միջավայրում:

Այս առնչությամբ առաջարկվում է՝ «Բարեվարքության շաբաթ» բուհային լուսանցքային ջանքերի միջոցով՝

1. Փոփոխել առաջարկվող արշավների ներառականությունը՝ ներառելով հակակոռուպցիոն թեմաներ, որոնք ՄԻՊ-ի արշավների շրջանակում թերևս քիչ ե

ն

[7] https://ombuds.am/am/site/ViewNews/3267?utm_source հաղորդագրություն՝ 05.02.2025

ը

ն

Հստակ իրագործելիության գնահատման տեսանկյունից այս գործողությունն իրագործելի է կարճաժամկետ։

2. Բարձրացնել երիտասարդների (բուհերի ուսանողների) ակտիվ մասնակցությունը՝ ընդգրկելով այդ արշավները ոչ միայն իրավագիտակցության, այլև բարեվարքության/կոռուպցիայի դեմ գիտելիքների կոնկրետ մասերով: **Հստակ իրագործելիության գնահատման տեսանկյունից այս գործողությունն իրագործելի է կարճաժամկետ։**
3. Սիներգիա ստեղծել պետական և բուհական հաղորդակցման մեխանիզմների միջև, ինչը նպաստում է ավելի լայն ազդեցության և երիտասարդների ներգրավվածության բարձրացմանը: **Հստակ իրագործելիության գնահատման տեսանկյունից այս գործողությունը միջնաժամկետ իրագործելի է։**

Ինչ վերաբերում է ԲՈՒՀ-երում ուսանողների ու դասախոսների հակակոռուպցիոն գիտելիքի բովանդակությանն ու դրա ազդեցության գնահատականին, ապա քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական կառույցների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքները հավաստում են, որ իրականացվող շատ միջոցառումներ չեն ունենում չափելի արդյունքային ինդիկատորներ, ուստի արդյունավետության վերաբերյալ տրված գնահատականները խիստ սուբյեկտիվ ու ոչ չափելի կարող են լինել: Սա է պատճառը, որ չափելիության պահանջը և՛ պետական համապատասխան համակարգող մարմինների, և՛ ԲՈՒՀ-երի համար համընդհանուր է: Ներկայումս, ԲՈՒՀ-երի ուսանողների հակակոռուպցիոն գիտելիքի ազդեցությունը իրենց ընտանիքներում, ԲՈՒՀ-ում, միջավայրում չափելի դարձնելու համար որևէ մեխանիզմ առկա չէ:

Այս առնչությամբ առաջարկվում է՝

Հաստատել բյուջետային ծրագրերի իրականացման համար ծավալային և որակական **Կատարողականի հիմնական ցուցիչներ (ԿՀՑ**-ներ) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին(ԿԿՀ) ու Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (ԿԳՄՍՆ) տրամադրել իրականացման պարտադիր տարեկան պլան: Դրա համար անհրաժեշտ է.

- Մշակել միասնական տարեկան կատարողականի հիմնական ցուցիչների փաթեթ՝ «ծածկույթ–մասնակցություն–ազդեցություն» տրամաբանությամբ:

- Հրապարակել Կատարողականի հիմնական ցուցիչները (ԿՀՑ) բաց տվյալների հարթակում։
- ԿՀՑ-ների հաշվետվությունը դիտարկել որպես հաջորդ տարվա բյուջեի հաստատման նախապայման։

Հստակ իրագործելիության գնահատման տեսանկյունից այս գործողությունները երկարաժամկետ իրագործելի են։

Ռիսկեր ու նվազեցման մեխանիզմներ

Ռիսկ՝ Միասնական տարեկան կատարողականի հիմնական ցուցիչների (ԿՀՑ) փաթեթի մշակումը տարաձայնություններ կարող է առաջացնել բյուջետային ծրագրեր կազմող և այդպիսիք իրականացնող պետական իրավասու մարմինների շրջանում։

Մեղմում՝ ԿՀՑ-ների հաշվետվությունը դիտարկել ոչ թե որպես հաջորդ տարվա բյուջեի հաստատման նախապայման, այլ որպես նախապատվություն։

Խնդիր 2.

Ի պատասխան 2025 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի կատարման ընթացքի և արդյունավետության վերաբերյալ կատարված էլեկտրոնային հարցման՝ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեից ստացվել է գրավոր պատասխան, որտեղ նշվում է, որ ի կատարում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավորապես, Երևանի պետական, Մ. Հերացու անվան պետական բժշկական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի ազգային ագրարային, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարաններում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում և ՀՀ պետական կառավարման

ակադեմիայի հետ համագործակցության արդյունքում 2024 թվականին մշակվել է տիպային դասընթացի մոդել, որը ներկայացվել է բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ վերջիններիս համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար:

Այնուամենայնիվ բարձրագույն կրթության ոլորտում շարունակում է գործել **հակակոռուպցիոն կրթության ինտեգրման անհավասար և չկարգավորված համակարգը:** Ըստ բուհերից ստացված համապատասխան տեղեկատվության՝ բակալավրիատի և մագիստրատուրայի գրեթե բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում մշակված և ներդված են հակակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամընտրական կամ պարտադիր) դասընթացների ինքնավար մոդել, որոնք պարունակում են բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն բաղադրիչներ: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ակադեմիական ազատության երաշխիքով պայմանավորված [8], ԲՈՒՀ-երը պարտադիր ներդրման պարտավորություն չունեն: Այս առնչությամբ՝

- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական ԿԳՄՍ-ն-ի ներկայացուցիչները համակարծիք են, որ մոդուլի պարտադիր լինելը բարձրացնում է որակի չափորոշիչները և ապահովում միասնական մոտեցում:
- ԲՈՒՀ-երի ներկայացուցիչները կատարված դաշտային աշխատանքների ընթացքում հայտնել են, որ պատրաստ են ինքնակազմակերպման և պարտադիր մոդուլի ներդրմանը, եթե այն ամրագրվի որպես որակի չափանիշ:

Այս առնչությամբ առաջարկվում է՝

- Հաստատել մոդուլի ներդրումը գիտության և բարձրագույն կրթության հավատարմագրման չափանիշներում՝ որպես պարտադիր որակի ցուցիչ: Հակակոռուպցիոն կրթության մոդուլի ներդրումը պրոֆեսորադասախոսական և վարչական մասի համար դիտարկել լիցենզավորման և/կամ հավատարմագրման չափանիշների շրջանակում(**Միջնաժամկետ իրագործելի**)
- ԲՈՒՀ-երում ներդել հակակոռուպցիոն քաղաքականություններ և այս նպատակով առաջարկվում է ԿԳՄՍ նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման

[8] https://www.arlis.am/hy/acts/143723/latest

հանձնաժողովի համագործակցությամբ մշակել ԲՈՒՀ-երի հակակոռուպցիոն քաղաքականության տիպային մոդելներ **(Միջնաժամկետ իրագործելի)**

- Ուսանողների և դասախոսների հակակոռուպցիոն գիտելիքների վավերացման համար բոլոր հավատարմագրվող բակալավրի և մագիստրոսի ծրագրերում ներդնել **պարտադիր մինի-մոդուլ (1–2 կրեդիտ)**՝ «Ակադեմիական բարեվարքություն և հակակոռուպցիոն մշակույթ»՝ միջոլորտային կառուցվածքով (իրավական հիմքեր, շահերի բախում, նվերներ/քաղաքականություններ, ակադեմիական բարեվարքություն, մատակարարման կոռուպցիոն ռիսկեր)։ Ներդրումը կապել գիտության և բարձրագույն կրթության հավատարմագրման չափանիշների հետ՝ որպես պարտադիր որակի ցուցիչ։ Ըստ անհրաժեշտության, այս ծրագիրը կարելի է ներդրել նաև պիլոտային եղանակով։ (**Միջնաժամկետ իրագործելի)**
  - Միասնական չափորոշիչները հաստատել ԿԳՄՄՆ–ԿԿՀ–ԲՈՒՀ եռակողմ համագործակցությամբ և համաձայնությամբ։

  (Երկարաժամկետ իրագործելի)
  - Մոդուլի ներդրման համար ապահովել նպատակային բյուջետային աջակցություն։

  (Երկարաժամկետ իրագործելի)

Ռիսկեր ու նվազեցման մեխանիզմներ

<u>Ռիսկ</u>՝ ԲՈՒՀ-երը չեն ներդնի պարտադիր մոդուլը՝ ակադեմիական ազատության պատճառաբանությամբ։

<u>**Մեղմում**</u>՝ Մոդուլը ներառել որակի չափորոշիչների մեջ, ոչ թե նախատեսել որպես պարտադիր։

Ռիսկ՝ Մոդուլի ներդրման համար նպատակային բյուջետային աջակցությունը հավանության չի արժանանա

<u>**Մեղմում**</u>՝ Մոդուլի ներդրումը կարելի է իրականացնել ԿԳՄՄՆ ի որևէ այլ ծրագրի Շրջանակում՝ առանց առանձին նպատակային բյուջետային աջակցության տրամադրման։

Խնդիր 3.

ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն գիտելիքի **ուսումնական արդյունքի չափելիության ցածր աստիճանը և միկրոորկավորումների բացակայությունը անվստահելիության և անարդյունավետության մթնոլորտ են ստեղծում** ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական անձնակազմի համար։ Հակակոռուպցիոն գիտելիքը թեև ներկայումս հասանելի է, սակայն հմտությունների վկայագրում չկա։ Այս տեսանկյունից, որպես ոլորտի դրական տեղաշարժ՝

- ԿԳՄՍ-Ն ներկայացուցիչները հատուկ ընդգծել են, որ միկրոորակավորումների ներդրումը կստեղծի գործատուների հետ ինտեգրման նոր հնարավորություններ։
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով՝ վկայագրման գործընթացը իրական աշխատաշուկայական արժեքի ստեղծման նախապայման կհանդիսանա։
- ԲՈՒՀ-երը քննարկումներում ողջունել են գիտելիքների վկայագրման գաղափարը, նշելով, որ այն խթանում է ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների մոտիվացիան։

Այս առնչությամբ առաջարկվում է՝

ԿԿՀ-ի e-learning և HELP[9] դասընթացների հիման վրա մշակել միասնական ուսումնական բովանդակություն՝ ներդնելով **միկրոորակավորումների մեխանիզմ** ուսանողների և դասախոսների համար, ինչը կապահովի հստակ ձևակերպված ուսումնական արդյունք հակակոռուպցիոն գիտելիքի ոլորտում և կերաշխավորվի վկայագրով՝ հիմնվելով ԿԿՀ e-learning կամ HELP դասընթացների վրա։

(**Միջնաժամկետ իրագործելի**)

- Գիտելիքի վավերացումը կատարել ԿՀՑ-ների և նախնական և հետթեստավորման մեթոդների հիման վրա։

(**Միջնաժամկետ իրագործելի**)

- Ապահովել վկայականների թվայնացված և միջազգային ճանաչելի ձևաչափ։

[9] https://elearning.cpcarmenia.am/blog/index.php

(**Միջնաժամկետ իրագործելի**)

Խնդիր 4.

Կրթական ոլորտում **թափանցիկության պակասը, տվյալների չկենտրոնացվածությունն ու հակակոռուպցիոն կրթության ազդեցության չափելիության ա**նհնարինությունը մնում են հակակոռուպցիոն մշակույթի ներդրման մարտահրավերներ։

- 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության տրամաբանությամբ Հակակոռուպցիոն մոնիթորինգի համակարգը պետք է հնարավորություն ընձեռի գնահատել կոռուպցիայի մակարդակի փոփոխությունները, ներառել բովանդակային՝ կատարողական մոնիթորինգի համակարգը, տալ ընթացիկ իրավիճակի չափելի նկարագիրը։ Մոնիթորինգի և գնահատման համակարգի արդյունավետության վրա իր բացասական ազդեցությունն է թողնում նաև այդ ուղղությամբ իրականացվող հարցումների իրականացման միասնական մեթոդաբանության բացակայությունը, ինչը հնարավորություն չի տալիս ապահովել հարցումների իրականացման ինստիտուցիոնալացումը, ինչը շատ կարևոր է հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքային ազդեցությունը գնահատելու, հասարակության հետ հետադարձ կապն ապահովելու նպատակով։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել կոռուպցիայի դեմ պայքարի առնչությամբ հանրային հարցումների միասնական մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունը և հարցումների իրականացման ինստիտուցիոնալացման հնարավորությունը[10]։
- Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մոնիթորինգի 2025 թվականի առաջին կիսամյակի զեկույցն արձանագրել է ռազմավարական նպատակ 3-ի կատարողականի թիրախները՝ արձանագրելով Հակակոռուպցիոն պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկված բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ հստակ տվյալները, հետադարձ կապի ցուցիչների և մեխանիզմի բացակայության վերաբերյալ թերացումներն ու

[10] https://moj.am/storage/uploads/1871.1.pdf էջ 69-72

հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ միջազգային լավագույն փորձի լույսի ներքո օրենսդրական մակարդակում հակակոռուպցիոն կրթության ընդհանուր նպատակի, մեթոդաբանության և առանցքային հիմնահարցերի վերաբերյալ դրույթների մշակման անհրաժեշտությունը[11]:

- Թեև «Իրավական իրազեկմում և տեղեկատվության ապահովում» ծրագրի համար բյուջեն մեծ է (1.2 մլրդ դրամ)[12], սակայն ագրեգացված տվյալներ առկա չեն, ինչը նվազեցնում է հաշվետվողականության մակարդակը:

Այս առնչությամբ առաջարկվում է՝

Ստեղծել բաց տվյալների մեկ միասնական վահանակ հակակոռուպցիոն կրթության ամբողջ շղթայի համար: Բաց տվյալների մեկ միասնական վահանակում ներառել.

- հակակոռուպցիոն մոդուլ ներդրած ԲՈՒՀ-երի տոկոսը,
- ուսանողների և դասախոսների հակակոռուպցիոն կրթության ներգրավման մասնակցության ցուցանիշային տվյալները (HELP/e-learning),
- գիտելիքի միջին աճը,
- անանուն ալիքների գործարկման վիճակագրությունը,
- ԿՀՑ-ների կատարողականը:

(Կարճաժամկետ իրագործելի)

Ռիսկեր ու նվազեցման մեխանիզմներ

<u>Ռիսկ</u>՝ մեկ միասնական տեղեկատվական վահանակի տվյալների մատչելիության պակաս պետական մարմիններում:

<u>**Մեղմում**</u>՝ Տվյալների հավաքագրման միջև մարզային մոդելի ներդրում:

Խնդիր 5. Արդարադատության ոլորտի բյուջեում կրթական բաղադրիչի թերօգտագործում:

[11] https://moj.am/storage/uploads/AC_Monitoring_Report_2025_1st_half%20(1).pdf էջ 94-102
[12] https://www.e-gov.am/interactive-budget/2024/ հավելված 4, ծրագիր 1123, 4165 տող

Դատական իշխանության «Վերապատրաստման ծառայությունների» բյուջեից (ծր. 1080, 11021) որոշ մասը ուղղել ԲՈՒՀ-երի հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացմանը։

- Դատական համակարգի վերապատրաստման բյուջեն տարեկան կազմել է զգալի ծավալ, մինչդեռ ուսումնական բաղադրիչի և համալսարան–արդարադատություն կապի պակասը համակարգային խնդիր է։
- Շահագրգիռ կողմերի հետ ունեցած քննարկումների արդյունքներով առաջարկը դրական արձագանք է ստացել՝ հիմքում ունենալով այն մոտեցումը, որ առաջարկի ընդունման դեպքում հնարավոր կլինի՝բարձրացնել կրթական ազդեցությունը որպես հակակոռուպցիոն կրթական միջավայրի ձևավորման կարևորագույն օղակ,
- Նման ֆինանսական վերուղղումները չեն պահանջում նոր ծրագիր, ուստի կուժեղացնեն առկա մեխանիզմները։ Ի հավելումն՝ արդարադատության և կրթության պատասխանատուների պարբերական փոխգործակցությունը կամրացնի հակակոռուպցիոն միջավայրի ձևավորման դաշտը։

Այս առնչությամբ առաջարկվում է՝

- ԿԳՄՍ նախարարության որևէ ծրագրի շրջանակում իրականացնել դասախոսների վերապատրաստում։

(**Միջնաժամկետ իրագործելի**)

Այս տեսանկյունից վերջին շրջանում արձանագրվել է մի կարևոր դրական զարգացում, որը լրացուցիչ ամրապնդում է արդարադատության և բարձրագույն կրթության փոխկապակցման քաղաքական ուղղությունները։ Խոսքը վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի և Երևանի պետական համալսարանի միջև ստորագրված համագործակցության հուշագրին։

Հուշագիրը նախատեսում է.

- արդարադատության ոլորտի համար մասնագետների պատրաստման որակի բարձրացում,
- ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և դատական իշխանության միջև գիտակրթական համագործակցության ամրապնդում,

- համատեղ կրթական ծրագրերի, մասնագիտական վերապատրաստման և գիտական նախաձեռնությունների իրականացում,
- դատական համակարգի համար կարևոր բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն մշակույթի վերաբերյալ կարողությունների զարգացում։

  Այս հուշագիրը ծառայեցվում է որպես բարձրագույն կրթության՝ արդարադատության համակարգին տրամադրած ներդրման նոր որակ, որը համահունչ է՝
- հակակոռուպցիոն ռազմավարության,
- դատական համակարգի ինստիտուցիոնալ զարգացման,
- բուհական բարեվարքության և մասնագիտական պատրաստության բարձրացման նպատակներին։

Այն նաև փաստում է, որ Հայաստանի առաջատար ԲՈՒՀ-երը պատրաստ են մասնակցել կոռուպցիայի հակազդման և կանխարգելման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը՝ կրթական և հետազոտական ներուժը ծառայեցնելով արդարադատության ոլորտում մասնագիտական բարեվարքության, էթիկայի և պատասխանատվության մակարդակի բարձրացմանը։

Այս համագործակցությունը դիտարկվում է որպես ողջունելի օրինակ և կարող է ծառայել ԲՈՒՀ–հանրային իշխանություն համակարգային կապերի ամրապնդման նախադեպ՝ երկրի մյուս բուհերի համար։

Խնդիր 6.

ԲՈՒՀ-երում **բարեվարքության ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի բացակայություն**։

Կատարված հարցումները հավաստել են, որ շատ բուհեր արդեն ունեն բարեվարքության բաղադրիչներով դասընթացներ, սակայն դա ինքնակազմակերպման արդյունք ու հետևանք է, և դաշտը համակարգային պատասխանատուի կարիք ունի։ Բացի սա՝ հանդիպումներին մասնակցած ԲՈՒՀ-երի ներկայացուցիչները նշել են, որ անանուն հարթակը կբարձրացնի վստահությունը և միջավայրի անվտանգությունը։

Համաշխարհային պրակտիկան ևս խորհուրդ է տալիս ունենալ առանձին բարեվարքության հարցերով պատասխանատու, ով տվյալ ԲՈՒՀ-ի հաստիքացուցակում կունենա առանձնացված պաշտոնի անձնագիր։

Այս առնչությամբ առաջարկվում է՝

- յուրաքանչյուր ԲՈՒՀ-ում նշանակել Բարեվարքության հարցերով պատասխանատու
- ստեղծել ուսանողական «դեսպանների ցանց» ուսանողների ներգրավմամբ,
- գործարկել անանուն (speak-up) հարթակ ակադեմիական խախտումների և կոռուպցիոն դեպքերի համար:
- ապահովել տարեկան հաշվետվություն ԿԳՄՍ-ին,
- անանուն հարթակները կապել վահանակի ԿՀՑ-ների հետ:

(**Միջնաժամկետ իրագործելի**)

Խնդիր 7. Հաղորդակցական ռազմավարության ցածր ինտենսիվություն և երիտասարդության թիրախավորում

Այս առնչությամբ առաջարկվում է՝

ԲՈՒՀ-երում գործարկել օրինակ՝ «Բարեվարքության շաբաթ» լուսանցքային նախաձեռնություններ: Հայաստանյան ԲՈՒՀ-երի ուսանողներից շատերը դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված հարցումների արդյունքում նշել են, արդյունավետ են համարում հակակոռուպցիոն գիտելիքի ոլորտում մրցույթների, բաց դասախոսությունների, բանավեճերի կազմակերպումը: Այս մշակույթի ինտեգրման համար օգտակար գործիք են հանդիսանում եվրոպական տարբեր կրթական հաստատություններում անկախ ու անանուն բարեվարքության ալիքները [13] : Այս մշակույթի ներդրմամբ հնարավոր է դառնում կրթություն-կանխարգելում-հաղորդակցություն բլոկի գերակշռումը՝ ի հակադրություն այսօր հայաստանյան իրականության մեջ գերակշռող «հակազդում/քննություն» բաղադրիչի: Այս մոդելի ինտեգրումը հնարավորություն է տալիս առավելապես խուսափել անձերի թիրախավորումից, բարձրաձայնել խնդիրները՝ կենտրոնանալով ցանկալի արդյունքի հասնելու առողջ մեթոդի, այլ ոչ անձերով պայմանավորված պատժիչ գործելաոճի վրա: Այս տեսանկյունից զարգացող պետությունների, հատկապես եվրոպական փորձը

[13]Բարեվարքության ալիքի ֆիննական մոդել՝ https://www.aalto.fi/en/aalto-university/ethical-channel

վստահեցնում է, որ հակակոռուպցիոն կրթությունը դիտվում է արժեհամակարգային ներդրում, ոչ թե որպես միայն իրավական պարտավորություն, մինչդեռ Հայաստանում դեռ գերակշռում է հակազդման մոտեցումը, ոչ թե կանխարգելման։

Այս առնչությամբ առաջարկվում է՝

- Համալսարաններում կազմակերպել թեմատիկ շաբաթներ՝ դասախոսություններ, խաղարկային սցենարներ, դեպքերի ուսումնասիրություն։
- Դրանք միավորել հավատարմագրման դասընթացների հետ։

(կարճաժամկետ իրագործելի)

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական արդյունք

- հակակոռուպցիոն կրթությունը դառնում է բոլոր բուհերի պարտադիր բաղադրիչ,
- ուսանողները ստանում են վկայագրված գիտելիք,
- հակակոռուպցիոն կրթության մոդուլի ներդրումը պրոֆեսորադասախոսական և վարչական մասի համար դիտարկվում է լիցենզավորման և/կամ հավատարմագրման չափանիշների շրջանակում
- դասախոսները համալրում են մասնագիտական բարեվարքության հմտությունները:

Թափանցիկություն և հաշվետվողականություն

- Տվյալների միասնական վահանակներն ապահովում են ոլորտի բաց կառավարում,
- անանուն ալիքները բարձրացնում են վստահությունը,
- ԿՀՑ-ները ուժեղացնում են պետական վերահսկողությունը:

Ինստիտուցիոնալ կայունություն

- Բարեվարքության պատասխանատուի ինստիտուտը ստեղծում է ինքնակարգավորման մշակույթ,
- ԲՈՒՀ-երի հակակոռուպցիոն քաղաքականության տիպային մոդելների մշակման ընթացքում ԿԳՄՍ նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցությունը ապահովում է համագործակցային ու կառուցողական միջավայր
- Միքրոորակավորումները ապահովում է աշխատաշուկայի և կրթության կապ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն կրթությունը լրջագույն ներդրում է պետական համակարգի կայունության մեջ։

Կոռուպցիան ոչ թե օրենքի, այլ գիտակցության խնդիր է։ Իսկ գիտակցությունը ձևավորվում է կրթությամբ, մասնակցությամբ և օրինակով։